ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի հոկտեմբերի 13-ի, ժամը 14:00-ի նիստի
N 2 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու **Աննա Աշոտի Բայադյանի «Դատահաշվապահական փորձաքննություն» ուսումնական ձեռնարկի** հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ **Թ.Մ.Մկրտչյան:**

Զեկուցողը նշեց. հրատարակության ներկայացված ուսումնական ձեռնարկն ուղղված է դատահաշվապահական փորձաքննության կազմակերպման, անցկացման և դատարանում հաջորդական ընթացակարգային քայլերի ներկայացմանը, որի շրջանակներում կատարվել է դատական հաշվապահության, որպես հաշվապահական հաշվառման առանձին ճյուղի, խորացված հետազոտություն: Հիմք ընդունելով հետազոտության ընդհանուր մեթոդոլոգիական հնարքները՝ հեղինակը դատական հաշվապահության շրջանակներում ներկայացրել է հետազոտության մի շարք հատուկ մեթոդներ՝ փորձագիտական հետազոտություն, փորձագիտական եզրակացություն, հետաքննչական գործողություններին և դատավարական գործընթացին մասնակցություն: Առանձնակի ուսումնասիրել և մանրակրկիտ ներկայացրել է վերահսկողության, աուդիտորական գործունեության և դատահաշվապահական փորձաքննության տարբերությունները ինչպես ընթացակարգային, այնպես էլ օրենսդրության տեսանկյունից: Ուսումնական ձեռնարկը հատկապես կիրառելի կլինի «Աուդիտ» և «Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)» մագիստրոսի կրթական ծրագրերով սովորողների համար՝ էապես նպաստելով ուսումնառության արդյունավետության բարձրացմանը:

Ուսումնական ձեռնարկի վերաբերյալ ստացվել է 3 դրական կարծիք.

1) Ա.Մ.Գալստյան՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու:

2) Կ.Ա.Զուրաբյան՝ Երևանի պետական համալսարանի ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու:

3) Ա.Վ.Մաթևոսյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսների ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր:

Բոլոր կարծիքներում նշվում է, որ ներկայացված ուսումնական ձեռնարկն արդիական է, կատարված է բարձր մակարդակով, ունի գիտամեթոդական և գիտագործնական կարևոր նշանակություն: Այն դատական հաշվապահության գծով պարունակում է և՛ տեսական, և՛ գործնական խորացված գիտելիքներ և կարող է օգտակար լինել տնտեսագիտության և իրավագիտության բնագավառների պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների, ինչպես նաև իրավագիտական գիտելիքներ ունեցող մասնագետների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հիմք ընդունելով գրախոսների դրական կարծիքները, կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի, հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի խորհրդի և համալսարանի գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու **Աննա Աշոտի Բայադյանի «Դատահաշվապահական փորձաքննություն» ուսումնական ձեռնարկը** երաշխավորել հրատարակության, 100 օրինակ տպաքանակով, «Տնտեսագետ» հրատարակչությունում (նախատեսված է հրատարակչական պլանով): Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 58, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2022 թ. հոկտեմբերի 13
Երևան